



ՅԱՌԱՋԱԲԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Հասնել յաւարտ Տեղագրութեանս Սիսուանայ՝ յիշատակաւ զուգիցս այսոցիկ արանց, Լեւոնի Ա թագաւորի եւ Ներսիսի Լամբրոնեցոյ, վեհագոյն հանդիսացելոց ՚ի յետնում յայսմ մարզի ինքնիշխանութեան Հայոց, քանզի հատուցի կանխաւ դոյզն ինչ աղերս երախտեաց՝ առ հոգեւորն տէր, թուիմ անհրաժեշտ պահանջիլ յընթերցանելեաց, ըստ պատշաճի քաղաքական գործոցն՝ նուիրել դրուագս ինչ բանից՝ եւ առ աշխարհականն տէր, առ պանծալի պսակաւորն Լեւոն. զորոյ հարկ եղել զանուն եւ զգործս՝ վեր ՚ի վայր յիշատակել գրեաթէ յամենայն կողմանս երկրին, արժանաւորապէս յանուն իսկ նորին՝ քան ՚ի նախնեացն՝ կոչեցելոյ եւ կոչելոյ **Լեւոնի երկիր**: Անուն, որ է ասել անձն, զոր՝ եթէ չիցէ յանդգնութիւն չքնադագոյն ՚ի Հայկազնեայս ասել՝ ըստ քաղաքական տեսութեան, յանդգնագոյն թերեւս իցէ երկրորդ ումեք ՚ի մերայոցս դասել. անձն՝ ընդ որում՝ ոչ լոկ յիւրումն յայնմ Ռուբինեան հարստութեան, կամ ՚ի հնագոյնսն եւս յազգայինս՝ զործ է գտանել մրցողս զուգափառս, այլ եւ յօտար ազինս, յորոց՝ եւ ՚ի միջի վեհիցն ժամանակակցաց՝ պանծագոյնս փայլէ. զի ոչ ոք թերեւս առ նովաւ՝ այնքան արդիւնական եւ իրագործ երեւեցաւ յազգի իւրում՝ որքան Լեւոն ՚ի մերայումս. եթէ այլքն քաջու-